Հավելված

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
25.06.2020թ. N 5 ՈՐՈՇՄԱՄԲ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> (ՀՕ-237-Ն) օրենքի սոցիալական և առողջապահության ոլորտներին առնչվող հոդվածների կատարման ընթացքի վերաբերյալ միջոցառումների ծրագիրը

| **Միջոցառման անվանումը** | **Ժամկետները** |
|---|---|
| Համայնքային բյուջեների միջոցների հաշվին համայնքների սոցիալական և առողջապահական պարտադիր խնդիրների լուծման հետ կապված օրենսդրության ուսումնասիրություն, ինչպես նաև համայնքային բյուջեների վերջին երեք տարվա հատկացումների վերլուծություն: | 2020 թվականի ընթացքում |
| Ներկայացուցչությունն ապահովելու նպատակով՝ ընտրանքային եղանակով ընտրված՝ Հայաստանի 10 քաղաքային և 20 գյուղական համայնքներից ստանալ տվյալներ՝ <<Տեղական ինքնակառավարման մասին>> (ՀՕ-237-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ, 17-րդ և 18-րդ կետերով սահմանված՝ համայնքի պարտադիր խնդիրներից հետևյալների վերաբերյալ.<br><br>ա)համայնքի բնակչության սոցիալական պաշտպանության հետ կապված հարցեր.<br><br>բ) համայնքում ծնելիության և բազմազավակության խթանման հետ կապված հարցեր.<br><br>գ) համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացման և մատչելի առաջնային բժշկական սպասարկման պայմանների ստեղծման հետ կապված հարցեր. | 2020 թվականի ընթացքում |
| Սոցիոլոգիական հարցումների իրականացում | 2020 թվականի ընթացքում |
| Տվյալների ամփոփում, վերլուծություն և ամփոփիչ զեկույցի ներկայացում հանձնաժողովին | 2021 թվականի 1-ին եռամսյակ |
| Ընդունել վերահսկողության արդյունքների վերաբերյալ ԳՐԱՎՈՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ և աշխատակարգով սահմանված կարգով այն ուղարկել Ազգային ժողովի մյուս մարմիններ («ԱԺ կանոնակարգ» ՀՀ օրենք, 122-րդ հոդված, 6-րդ մաս) | 2021 թվական, հունիս |